# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Երևան քաղաքի թիվ 153 դպրոցի կաթսայատան նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գործող սեյսմիկ շինարարության նորմերին և կանոններին:

Կաթսայատունը միահարկ է, հատակագծում ունի 7,4 և 5,0մ առանցքային չափեր, հարկի բարձրությունը 3,3մ է:

Որպես կրող կոնստրուկցիա ծառայում են 40սմ հաստությամբ ուղիղ հատվածքի տուֆ քարից շարվածքով պատերը: Գետնախարիսխը -բազալտե սալեր 30մմ հաստության: Պատերի հատման տեղում տեղադրվում են ամրանային ցանցեր 300մմ քայլով;

Ծածկը իրականացվում է ե/բետոնե, միաձույլ:

Կաթսաների տակ իրականացվում են միաձույլ ե/բետոնե հիմքեր:

Կաթսայատունը ունի 350մմ տրամագծով ծխատար խողովակ, որը ունի առանձին կանգնած ե/բետոնե հիմք և ճկուն կապերով ամրացվում է կաթսայատան ծածկին:

Տանիքը միաթեք է , իրականացվում է փայտյա կոնստրուկցիաների վրա հենվող ցինկապատ պրոֆիլավորված թիթեղից ծածկույթով: Օգտագործվող փայտանյութը - սոճի կամ եղևնի: Փայտյա կոնստրուկցիաները պետք է պատել հականեխիչ և հրապաշտպան լուծույթներով:

Հիմքերը բետոնե ժապավենային են: Կառույցի հիմքերի խրամուղիները փորելուց հետո և հիմքերը լցնելուց առաջ անհրաժեշտ է կատարել հիմնատակ ծառայող գրունտների զննում ինժեներ-երկրաբանի կողմից, կազմելով համապատասխան ակտ:

Նախատեսվում է հիմքերի հորիզոնական ջրամեկուսացում ցեմենտի շաղախով:

Կաթսայատան եզրագծով նախատեսվում է սալվածք:

Շինարարության տեղանքը գտնվում է III սեյսմիկ գոտում:

Հարաբերական 0,00 նիշը համապատասխանում է 51.40 բացարձակ նիշին:

| NN | ԱՆՎԱՆՈՒՄ | ԹԵՐԹ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | ԳԼԽԱԹԵՐԹ | - |
| 2 | ՀԱՏԱԿԱԳԾԵՐ , ՃԱԿԱՏՆԵՐ | ՃՇ - 1 |
| 3 | ԿՏՐՎԱԾՔ : ՀԱՏԱԿՆԵՐԻ, ԴՌՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳՐԵՐ | ՃՇ - 2 |
| 4 | ՏԱՆԻՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ, ՄԱՍՆԱԳԻՐ | ՃՇ - 3 |
| 5 | ՀԻՄՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ ՀԱՆԳՈՒՅՑ Հ-1 | ՃՇ - 4 |
| 6 | ԾԽՆԵԼՈՒՅԶԻ ՋԳԱԼԱՐԻ ՀԻՄՔԵՐ, ՄԱՍՆԱԳԻՐ | ՃՇ - 5 |
| 7 | ԾԱԾԿԵՐԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՍԽԵՄԱ, , ԿՏՐՎԱԾՔ | ՃՇ - 6 |
| 8 | ՄԻԱՁՈՒՅԼ ԲԱՐԱՎՈՐ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ, ՄԱՍՆԱԳԻՐ | ՃՇ - 7 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Մ.ՀՈՒՄՆՅԱՆ | | ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 153 ԴՊՐՈՑ | | | |
| ՆԳԺ | Մ.ՀՈՒՄՆՅԱՆ | | | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Ա.ԽԱՍՏՅԱՆ | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ / ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆ / | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՍՏՈՒԳԵՑ | Ն.ՍՏԵՓԱՆՅԱՆ | | | ԱՆ | - | 1 |
| | | | ԳԼԽԱԹԵՐԹ | «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ | | |